

**ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ՝
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Աննախադեպ զարգացում ապրած տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն այսօր ընդգրկել է հասարակական կյանքի լայն շրջանակներ՝ անխուսափելիորեն ներթափանցելով նաև սոցիալական կառավարման բոլոր շերտերը: Տեխնոլոգիայի դարաշրջանի պահանջներին համընթաց՝ պետությունները ձգտում են բարձրացնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման արդյունավետությունը, ինչպես նաև հնարավորինս մատչելի և վստահելի դարձնել քաղաքացի-վարչական մարմիններ փոխհարաբերությունները: Պետական քաղաքականության նորարարացման հետ մեկտեղ վերանայվում են նաև նախկինում ողջամիտ համարվող և կիրառվող ժամկետները՝ պայմանավորված հասարակությանը հասանելի դարձած տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած բազմաբնույթ հնարավորություններով: Նման պայմաններում ամբողջ աշխարհում նկատվում է կառավարման նորաստեղծ՝ էլեկտրոնային, համակարգին անցնելու միտում, և այդ զարգացումների համատեքստում Հայաստանի Հանրապետությունը բացառություն չէ²:

«Էլեկտրոնային կառավարում» եզրույթի մեկ միասնական սահմանում դեռևս չի մշակվել, ինչը, թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ էլեկտրոնային կառավարումը քաղաքական, սոցիալական, իրավական, տնտեսական և տեխնիկական բաղադրիչների համակարգ է, և վերջինիս էության ամբողջական բա-

¹ ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Դանիելյան:

² ՀՀ կառավարության 2010 թ. փետրվարի 25-ի նիստի N 7 արձանագրային որոշման հավելվածով նախատեսվեց Հայաստանի Հանրապետությունում ձևավորել էլեկտրոնային հասարակություն, որի բազմաթիվ նպատակներից մեկն էր ստեղծել և ամբողջ երկրում հասանելի դարձնել էլեկտրոնային կառավարման համակարգը:

ցահայտումը հնարավոր է միայն նշված բաղադրիչների կապն ու փոխհամաձայնեցվածությունը պարզելով: Այնուամենայնիվ, միջազգային փորձը փաստում է, որ էլեկտրոնային կառավարման համակարգը ոչ միայն կառավարման արդյունավետ, այլև ժողովրդավարական կառավարման կարևոր բաղադրիչ է¹:

Ընդհանուր առմամբ, էլեկտրոնային կառավարումը տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներում կատարվող հանրային ներդրում է՝ արդի կառավարման համակարգի կատարելագործման նպատակով: Վերջինս նպատակ ունի բարձրացնելու պետություն-հասարակություն փոխհարաբերությունների որակը՝ քաղաքացու համար մատչելի և հասանելի դարձնելով հանրային իշխանության մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, բարձրացնելու պետական և մունիցիպալ ծառայությունների արդյունավետությունը և ներդնելու հասարակության սպասարկման միասնական չափանիշներ²: Այդ իսկ պատճառով էլեկտրոնային կառավարման արդյունավետ համակարգի կառուցումն անքակտելիորեն կապված է նաև հանրային իշխանությամբ օժտված մարմինների կողմից իրականացվող վարչարարության արդյունավետության գործակցի հետ:

Ինչպես հայտնի է՝ *վարչարարությունը* վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: Մա համընդհանուր կանոն է, հետևաբար, չի կարելի անտեսել, որ էլեկտրոնային կառավարման համակարգում իրականացվող վարչարարության դեպքում ևս առկա կլինեն որոշակի հետևանքներ, որոնց առնչությամբ, սակայն, արդեն հարկ կլինի կիրառել այլ՝ ավելի նորարարական չափանիշներ:

Սույն աշխատության շրջանակներում հետազոտված են վարչարարության արդյունավետությանը խոչընդոտող գործնականում առկա խնդիրները, միջազգային փորձի լուսաբանմամբ առա-

¹ Sté u <http://www.undp.org/content/undp/en/home/ourwork/democratic_governance/focus_areas/focus_access_information/_jcr_content/contentPar/.

² Sté u ФЦП «Электронная Россия (2002–2010 годы)», Утверждена постановлением Правительства Российской Федерации от 28 января 2002 г., № 65.

ջադրված են դրանք հաղթահարելու եղանակները, անդրադարձ է արված իրավական և կառուցակարգային այն երաշխիքներին, որոնք անհրաժեշտ են վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու համար՝ էլեկտրոնային կառավարման համատեքստում: Հիշյալ հարցադրումները, ցավոք, դեռևս համարժեք հետազոտության նյութ չեն դարձել, ինչը, կարծում ենք, պայմանավորված է այն հանգամանքով, որ էլեկտրոնային կառավարման հետ առնչվող արդի հիմնախնդիրները մեր երկրում դեռևս համալիր և ամբողջական չեն ուսումնասիրվում: Մեր կարծիքով, հիշյալ հիմնահարցերով առավելապես զբաղվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետները՝ իրենց բնորոշ մեթոդաբանությամբ, մինչդեռ՝ ակնհայտ է, որ սույն ոլորտը բազմակողմ հետազոտության կարիք ունի, մասնավորապես, առաջանում են հասարակական նոր հարաբերություններ, որոնք առանձնահատուկ իրավական կարգավորում են պահանջում:

Վարչարարության ուսումնասիրության անհրաժեշտությունը էլեկտրոնային կառավարման համակարգի համատեքստում պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այն մեր երկրում աննախադեպ հնարավորություն է ընձեռում բարձրացնելու վարչարարության արդյունավետությունը, քաղաքացի-պետություն հարաբերություններում ստեղծելու առավել սոցիալական ուղղվածություն ունեցող միջավայր: Այս նորամուծությունների շնորհիվ պետությունն առավելապես է մոտենում Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իր սոցիալական բնույթին:

Նկատենք, որ կառավարման էլեկտրոնային ձևին անցնելն ամենևին չպետք է ինքնանպատակ լինի, ուստի ելակետային է համարվում սույն աշխատության շրջանակներում ընտրված հարցադրումների ուսումնասիրությունն իրականացնել այնպիսի տեսանկյուններով, որոնք հնարավորություն կտան բացահայտելու էլեկտրոնային կառավարման համակարգի շրջանակներում իրականացվող վարչարարության թերությունները, բացերը և հիմնախնդիրները՝ փորձելով գտնել դրանք լուծելու արդյունավետ տարբերակներ: Թերևս, հենց այդ նկատառումով է սույն հոդվածի առանցքը համարվել «Մեկ պատուհան» սկզբունքի՝ որպես էլեկտրոնային կառավարման համակարգում իրականացվող վարչարա-

րության արդյունավետության խթանման միջոցի հետազոտությունը:

«Մեկ պատուհան» սկզբունքն էլեկտրոնային կառավարման համակարգի առանցքային բաղադրիչներից է՝ կապված տեղեկատվական և հեռահաղորդակցման ժամանակակից տեխնոլոգիաների լայն կիրառման հետ: Այս սկզբունքը հիմնաքար է էլեկտրոնային վարչարարության կայացման համար: Վերջին հաշվով, ինչպես էլեկտրոնային կառավարման, այնպես էլ «Մեկ պատուհան» սկզբունքի նպատակները նույնական են՝ ապահովել արդյունավետ, արագ, նվազ ծախսատար, մատչելի վարչարարություն, առնվազն նվազագույնի հասցնել կոռուպցիոն երևույթների հնարավորությունները վարչարարության ոլորտում և այլն: Այս տեսանկյունից իրավական արժեք ունեցող հիշյալ երկու գործոնների համատեղումը ձեռք է բերել խիստ հրատապ նշանակություն, սակայն ողջ խնդիրն էլ այն է, որ այդ համատեղումը չի կարող համարվել պարզագույն խնդիր: Նկատենք, որ «Մեկ պատուհան» սկզբունքի կիրառման հնարավորություններ կան նաև էլեկտրոնային կառավարման ընձեռած լայն հնարավորությունների բացակայության պարագայում, ավելին՝ հայրենական իրավակիրառ պրակտիկան, ցավոք, զարգացել է այնպիսի անհարկի վերապահումներով, երբ էլեկտրոնային կառավարման սուսկ մասնակի ներդրման պարագայում նշված սկզբունքի ոչ բոլոր հնարավորություններն են բացահայտվել:

Գրականության մեջ «Մեկ պատուհան» սկզբունքը բնորոշվում է որպես քաղաքացու դիմումի հիման վրա պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ծառայությունների մատուցման կազմակերպում՝ բազմագործառության կենտրոնների միջոցով: Այսինքն՝ այդ սկզբունքի կիրառման արդյունքում ֆիզիկական կամ իրավաբանական անձը ազատվում է պահանջվող լրացուցիչ փաստաթղթեր և (կամ) տեղեկանքներ տարբեր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից ստանալու և դրանք նույն մարմիններին հանձնելու պարտականությունից. այդ խնդիրը լուծվում է «Մեկ պատուհան» ծառայության աշխատակիցների փոխհամաձայնեցված ու համակարգված գործունեությամբ: Այլ կերպ ասած՝ «Մեկ պատուհան» համակարգը միջնորդ է հանդիսանում քաղաքացի-հանրային իշխանության մարմին-

ներ փոխհարաբերություններում՝ վարչարարության իրականացման շրջանակներում:

«Մեկ պատուհան» սկզբունքով իրականացվող վարչարարության առանձնահատկությունը այն է, որ ցանկացած ծառայության մատուցումը կենտրոնացված է մեկ վայրում կամ մեկ հասցեում (թե՛ էլեկտրոնային, թե՛ սոսկ գրասենյակային տարբերակների պարագայում)՝ սկսած դիմում ներկայացնելուց մինչև վարչական մարմնի կայացրած որոշման հանձնումը դիմումատուին: Դիմումատուն անհրաժեշտ նվագագույն քանակի փաստաթղթերը ներկայացնում է մեկ անգամ, մեկ վայրում, մեկ մասնագետին, իսկ համապատասխան գրասենյակն արդեն ինքնուրույն է ընթացք տալիս դիմումին և, ըստ անհրաժեշտության, կապ հաստատում այլ վարչական մարմինների հետ, հավաքագրում անհրաժեշտ փաստաթղթեր, ձեռք բերում տեղեկություններ և այլն: Ընդ որում, «Մեկ պատուհան» համակարգի աշխատակիցները վարչարարություն չեն իրականացնում. նրանք ընդամենը միջնորդ օղակ են քաղաքացու և վարչական մարմնի միջև:

Ամբողջ աշխարհում լայն տարածում ստացած «Մեկ պատուհան» սկզբունքը գործնականում ունի երկու դրսևորում՝ էլեկտրոնային և գրասենյակային¹: Ընդ որում, շատ երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, նշված երկու եղանակներն էլ միաժամանակ կիրառվում են:

«Մեկ պատուհան» համակարգի էլեկտրոնային մոդելը ենթադրում է քաղաքացու դիմումի ընդունում և վարչական ակտի հանձնում տեղեկատվական և հեռահաղորդակցման ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով (վարչական մարմինների կայքէջեր, ինտերնետային պորտալներ, բջջային հեռախոսների համար ստեղծված հատուկ ծրագրեր, տերմինալներ և այլն): Ներկայումս, օրինակ, ՀՀ կառավարությունը՝ իր www.e-gov.am կայքով, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանը՝ www.yerevan.am կայքով, ապահովում են դիմումների ընդունումը համապատասխան բաժին, որի միջոցով հնարավոր է էլեկտրոնային եղանակով իրացնել «Մեկ պատուհան» սկզբունքը:

¹ Sté u Иванов В., Коробова А., Михальченков А., «Взгляд через «одно окно». Анализ введения режима «одного окна» в различных регионах РФ», <http://www.osp.ru/cio/2005/10/379633/>.

«Մեկ պատուհան» սկզբունքի հաջորդ դրսևորումը գործնականում ապահովվում է հատուկ նպատակով ստեղծված բազմագործառույթային գրասենյակների միջոցով, որոնք անվանվում են քաղաքացիների սպասարկման կենտրոններ¹: Այդպիսի գրասենյակները մեկ վայրում են կենտրոնացնում տարբեր վարչական մարմինների կողմից մատուցվող ծառայություններ ստանալու հնարավորությունը՝ սկսած առողջապահությունից մինչև անշարժ գույքի գրանցում (Բելառուսի Հանրապետությունում, օրինակ, այդ ծառայությունների թիվը հասնում է 414-ի²):

Այս գրասենյակների առկայությունն ընդլայնում է «Մեկ պատուհան» սկզբունքի կիրառման փաստացի սահմանները՝ հնարավորություն ընձեռելով օգտվել վերջինիս առավելություններից նույնիսկ համացանցի կամ զարգացած տեխնոլոգիների բացակայության պարագայում: Այս մոդելն իր կիրառումն է ստացել Հնդկաստանի, հատկապես, այն բնակավայրերում, որտեղ համակարգիչները և համացանցը անհասանելի են կամ «ճոխություն» են համարվել³: Նման պայմաններում քաղաքացիների սպասարկման կենտրոնները հավասարապես ապահովել են էլեկտրոնային կառավարման հասանելիությունը՝ Հնդկաստանի ողջ աշխարհագրական տարածքով: Ընդ որում, հետագայում տեխնոլոգիական զարգացումները ոչ թե նվազեցրին այդ համակարգի անհրաժեշտությունը, այլ առավել նշանակալից դարձրին: Թերևս, համեմատական վերլուծությունը թույլ է տալիս հանգելու այն եզրակացության, որ գրեթե նույնական կլինեն զարգացումները նաև մեր երկրում:

Ներկայումս քաղաքացիների սպասարկման կենտրոնները գործում են ոչ միայն զարգացած եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում, այլև հետխորհրդային Վրաստանի Հանրապետությունում, Ադրբեջանի Հանրապետությունում, Էստոնիայի Հանրապետությունում,

¹ Վառ օրինակ են Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի «Մեկ պատուհան» գրասենյակները, որոնք, սակայն, իրենց աշխատանքը կատարում են բացառապես Երևանի քաղաքապետի լիազորությունների շրջանակներում:

² Տե՛ս u Указ Президента Республики Беларусь от 13 сентября 2005 г., № 432 «О некоторых мерах по совершенствованию организации работы с гражданами в государственных органах, иных государственных организациях».

³ Տե՛ս u <http://www.csc.gov.in/>.

Լատվիայի Հանրապետությունում, Լիտվայի Հանրապետությունում, Բելոռուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում:

Հայաստանում «Մեկ պատուհան» սկզբունքով համակարգի հիմքը դրվել է Երևանի քաղաքապետի՝ 2011 թ. մարտի 12 «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգը հաստատելու մասին» թիվ 747-Ն որոշմամբ, որի 4.11.-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց գրությունների և դիմումների հիմքով քաղաքապետարանի ստորաբաժանումների ներկայացմամբ Երևանի քաղաքապետի կողմից ընդունված անհատական որոշումները կամ որոշումից բխող այլ ածանցյալ փաստաթղթերը կամ ձևակերպված այլ փաստաթղթերը հասցեատերերին է տրամադրվում «Մեկ պատուհանի» սկզբունքով փաստաթղթերի ընդունման վայրերում: Նույն որոշման 5.18.-րդ կետի 4-րդ պարբերությունը սահմանում է, որ կազմակերպություններից և քաղաքացիներից ստացված գրությունների և դիմումների հիմքով ընդունված Երևանի քաղաքապետի որոշումները կամ կարգադրությունները նրանց են տրամադրվում «Մեկ պատուհանի» սկզբունքի կիրառմամբ՝ համապատասխան վարչական շենքերում, որտեղ ընդունվել են փաստաթղթերը:

Վերը նշված որոշման հիման վրա բնակչության հետ շփումն ավելի մատչելի և օպերատիվ դարձնելու նպատակով Երևան քաղաքում բացվեց «Մեկ պատուհան» սկզբունքով աշխատող նոր գրասենյակ՝ հազեցած ժամանակակից տեխնիկական միջոցներով: Այսօր գրասենյակը հնարավորություն է ընձեռում փաստաթղթերի, դիմումների մուտքագրման և դրանց հիմքով ձևակերպված փաստաթղթերը հասցեատերերին առաքելու կամ առձեռն հանձնելու գործընթացներն առավել արդյունավետ իրականացնել:

«Մեկ պատուհան» սկզբունքի հաջորդ իրավական հիմքը հանդիսացավ ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 22-ի «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի «Թիվ 1768–Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1930-Ն որոշումները: Ծրագիրը առաջարկում էր ներդնել «Մեկ պատուհան» համակարգ արտաքին առևտրի բնագավառում, նոտարիատի համակարգում, ինչպես նաև

Երևանի քաղաքապետարանի կողմից «Մեկ պատուհան»-ի աշխատակարգը համապատասխանեցնել էվրոպական չափանիշներին, օգտագործման տեսանկյունից ապահովել մատչելիություն: Խնդրի մյուս կողմն է, թե ներկայումս որքանով է հաջողվել «Մեկ պատուհան» հայրենական համակարգը մոտեցնել զարգացած երկրներում կիրառվող մոդելին:

Ինչպես վերը նշվեց, «Մեկ պատուհան» սկզբունքի արդյունավետ իրացումը և ընդհանրապես էլեկտրոնային կառավարման ամբողջ համակարգի կայացումը համալիր լուծում պահանջող խնդիր է: Կցանկանայինք այդ համալիրից առանձնացնել երկու ուղղություններ, որոնք Հայաստանում առաջնահերթ ուշադրության կարիք ունեն տեխնիկական և իրավական. «Մեկ պատուհան» համակարգի արդյունավետ աշխատանքն անհնար է ապահովել առանց անխափան գործող տեխնիկական հիմք ունենալու, ինչպես նաև ինտերակտիվ վիրտուալ միջավայրի և տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաների արագ զարգացող միջավայրում առաջացող հարաբերությունների իրավական կարգավորման բացակայության պայմաններում: Այս ամենը թելադրում է վարչարարության սկզբունքների, հիմունքների, ժամկետների վերանայում և փոփոխում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների առանձնահատկությունները և հասարակության արդի պահանջները հաշվի առնելով:

Նախ և առաջ, քննարկող սկզբունքի կայացման ճանապարհին անհրաժեշտ է ստեղծել էլեկտրոնային փաստթղթաշրջանառության անխափան համակարգ, որը կապահովի ոչ միայն միևնույն, այլև վարչական տարբեր մարմինների միջև իրականացվող տեղեկությունների փոխանակումը¹: Օտարերկրյա փորձի ուսումնասիրությամբ ակնհայտ է դառնում, որ նման համակարգն անվանում են էլեկտրոնային փոխազդեցության միջգերատեսչական համակարգ: Վերջինս տեղեկատվական համակարգ է, որը պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններին հնարավորություն է տալիս էլեկտրոնային եղանակով կատարելու տեղեկատվության փոխանակում²: Այս համակարգի օգնությամբ առավել արդյունավետ

¹ St' u Inderpreet Kaur, Effective E-Administration for good Governance, International Journal of Computing & Business Research ISSN (Online): 2229-6166.

² St' u Федеральный закон РФ «Об организации предоставления государственных и муниципальных услуг».

կիրացվի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-18-րդ հոդվածներով սահմանված վարչական մարմինների կողմից փոխօգնության տրամադրումը, ինչպես նաև անխուսափելիորեն կկրճատվեն վարչարարության համար սահմանված ժամկետները, քանզի ավանդական թղթային ձևով կատարվող տեղեկատվության փոխանակումը կդառնա հնացած և ոչ արդյունավետ¹:

Եվ ամենակարևորը՝ «Մեկ պատուհան» սկզբունքը չի ենթադրում տարատեսակ վարչական մարմինների վարչական շենքերում առկա առանձնացված գրասենյակի առկայություն, որը բացառապես զբաղվում է տվյալ վարչական մարմնին ենթակա դիմումների հավաքագրմամբ և վարչական ակտերը հասցեատերերին հանձնելով: «Մեկ պատուհան» սկզբունքի ողջ էությունն այդպիսի մոտեցմամբ, մեր կարծիքով, խախտվում է: Այսինքն՝ սկզբունքն իրացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է հնարավորություն ստեղծել մեկ վայրում հայցելու և ստանալու տարբեր մարմիններին ենթակա վարչարարություն՝ բացառելով քաղաքացի-վարչական մարմին անմիջական շփումը: Հակառակ պարագայում՝ «Մեկ պատուհան» համակարգը վերածվում է փաստաթուղթ ընդունող-հանձնող հասարակ գրասենյակի և իր առաքելությունը չի կատարում: Մեր կարծիքով, կատարվել է նաև եզրույթի սխալ թարգմանություն, ինչը հանգեցրել է սկզբունքի էության խաթարման²: Արտասահմանյան գրականության մեջ այս սկզբունքն անվանվում է «Single Window»³, այսինքն՝ *միասնական* պատուհան և ոչ «One Window»՝ մեկ պատուհան: Միգուցե սխալը գալիս է ռուսական աղբյուրներից, քանի որ ռուսալեզու գրականության մեջ «Единое окно»-ի փոխարեն գործած-

¹ Այս տեսակետն ընդհանրացված է, բացարձակ չէ, բնականաբար, չի կարող կիրառելի լինել բոլոր տեսակի տեղեկատվության փոխանակման համար:

² Առավել հանգամանորեն խնդիրը վերլուծված է հետևյալ աշխատությունում՝ Ղազարյան Ն., Լեզվաքաղաքականության արդի խնդիրները էլեկտրոնային կառավարման համատեքստում, Պետություն և իրավունք, թիվ 3-4 (65-66), ԵՊՀ, Երևան, 2014, էջեր 32-41:

³ Տե՛ս, օրինակ, The Single Window Concept, United Nations Economic Commission for Europe, <http://www.unece.org/fileadmin/DAM/trade/ctied/ctied7/ece_trade_324e.pdf>:

վում է «Одно окно» եզրույթը, ինչը նույնպես տանում է սկզբունքի բուն էության աղավաղմանը:

Վերոշարադրյալը վերաբերում է նաև «Մեկ պատուհան» էլեկտրոնային համակարգին: Վարչական մարմնի կայքէջում տեղադրելով «Մեկ պատուհան» վերտառությամբ բաժին դեռևս չի նշանակում քննարկվող սկզբունքի ինքնըստինքյան իրացում: Ռուսաստանի Դաշնության պետական ծառայությունների ինտերնետային կայքի¹ միջոցով հնարավոր է դիմել պետական բոլոր մարմիններին, ինչպես նաև ստանալ մանրակրկիտ տեղեկատվություն. ցանկացած ծառայության համար ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ, ինչպիսի ընթացակարգով է դա կատարվում, որքան ժամկետում և այլն: Կարծում ենք՝ ժամանակն է Հայաստանում նույնպես ստեղծելու մեկ միասնական կայք-պորտալ, որտեղ հնարավոր կլինի մատուցել բազմաբնույթ ծառայություններ և հնարավորինս սպառիչ տեղեկություններ ներառել վարչական տարատեսակ ընթացակարգերի վերաբերյալ: Մեկ միասնական կայքի առկայությունը խթան կհանդիսանա էլեկտրոնային կառավարման համակարգի և վարչարարության հասանելիության և մատչելիության համար:

Նկատենք նաև, որ տեղեկատվական հասարակությունում քաղաքացիների հետ հաղորդակցությունը, պետական ծառայությունների մատուցումը կատարվում են էլեկտրոնային փաստաթղթերի և վիրտուալ կապի միջոցով: Սակայն հայրենական գործող օրենսդրությունը գրեթե ամբողջապես արտացոլում է ավանդական փաստաթղթաշրջանառությունը և դեռևս բովանդակում է բավականաչափ խոչընդոտներ, ինչպես նաև սահմանափակումներ՝ էլեկտրոնային եղանակի օգտագործման համար: Հասարակության համար բավականաչափ պարզաբանված և իրավական կարգավորման ենթարկված չեն այն հարցադրումները, թե որո՞նք են էլեկտրոնային վարչարարության դիմելու անհրաժեշտ հիմքերն ու պահանջները, կամ կա՞ն, արդյոք, այդ առնչությամբ սահմանափակումներ, ի՞նչ իրավական ակտեր են կիրառելի «Մեկ պատուհան» սկզբունքով իրականացվող վարչարարության պարագայում և այլն:

¹ Տե՛ս www.gosuslugi.ru:

Էլեկտրոնային կառավարման ոլորտին առնչվող հարաբերությունների կարգավորումն ամբողջապես բաց է մնացել և, անհասկանալիորեն, մղվել է հետին պլան, իսկ ավանդական վարչարարության իրավական կարգավորումը կիրառելի չէ էլեկտրոնայինի նկատմամբ, քանզի հարմարեցված չէ ժամանակակից պահանջներին և բավարար չափով ճկուն չէ: Մինչդեռ այդպիսի իրավական կարգավորման անհրաժեշտությունը հիմնավորված է միջազգային փորձով¹: Մեր կարծիքով, հրատապ է նաև համալիր նորմատիվ-իրավական ակտի մշակումը՝ գործնականում արդեն իսկ առկա հարաբերությունները մանրակրկիտ իրավական կարգավորման ենթարկելու համար:

Ամփոփելով վերոշարադրյալը և հաշվի առնելով բարձրացված խնդրի գիտագործնական նշանակությունը՝ հավելենք, որ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, տեղեկատվական տարատեսակ համակարգերի մշակումն ինքնին հաջողություն չի երաշխավորում, քանի դեռ գործնականում տեսանելի չէ ոչ միայն հասարակությանը, այլև պետական կառավարման համակարգին արդյունավետ վարչարարության հետևանքով ձեռք բերված օգուտը: Առաջադրված նպատակին, այն է՝ վարչարարության արդյունավետությունը բարձրացնելուն, հավուր պատշաճի հասնելու նկատառումով հարկ է ղեկավարվել որոշ նվազագույն պահանջներով և քայլ առ քայլ լուծել հետևյալ խնդիրները՝

- հասարակության իրազեկման եղանակներով մատչելի դարձնել ոչ միայն էլեկտրոնային կառավարման համակարգի՝ ընդհանրապես, այլև էլեկտրոնային տեղեկատվության առավելությունները,

- մշակել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ և ապահովել դրա անխափանությունն ու անվտանգությունը,

¹ St´ u Указ Президента Республики Беларусь от 13 сентября 2005 г., № 432 «О некоторых мерах по совершенствованию организации работы с гражданами в государственных органах, иных государственных организациях», Постановление правительства Республики от 5 января 2007 г., № 1 «О создании государственных учреждений - центров обслуживания населения Министерства юстиции Республики Казахстан», Федеральный закон РФ «Об организации предоставления государственных и муниципальных услуг» և այլն:

- մարզերում և Երևան քաղաքում՝ յուրաքանչյուր վարչական շրջանում, հիմնադրել վարչարարությանն աջակցող քաղաքացիների սպասարկման կենտրոններ¹,

- ապահովել քաղաքացիների սպասարկման կենտրոնների աշխատանքը նաև ոչ աշխատանքային ժամերին՝ առանց ընդմիջման (հինչը կբարձրացնի վարչարարության մատչելիությունն ու հասանելիությունը),

- իրավական կարգավորման ենթարկել բազմագործառույթային գրասենյակների կողմից իրականացվող գործունեությունը, սահմանել այն ծառայությունների ամբողջական ցանկը, որոնք մատուցվում են քաղաքացիների սպասարկման կենտրոններում,

- սահմանել հատուկ ժամկետներ՝ «Մեկ պատուհան» սկզբունքով իրականացվող վարչարարության առանձին փուլերի համար,

- մշակել իրավական ակտերի նախագծեր, որոնք միտված կլինեն սույն ոլորտին առնչվող իրավական ակտերում փոփոխություններ կատարելուն, կարդիականացնեն վարչարարության ընթացակարգը և կինտեգրվեն էլեկտրոնային կառավարման ոլորտ:

Որպես եզրահանգում, նկատենք, որ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ հնարավոր է դառնում վերանայելու «Մեկ պատուհան» սկզբունքի կիրառման ներկայիս պատկերացումները և նախապատվությունը տալ վարչարարության կենտրոնացում և միասնականություն երաշխավորող համակարգին:

¹ Ի հավելումն թվարկված դրական ազդեցություններին՝ քաղաքացիների սպասարկման կենտրոնները ՀՀ-ում կարող են գործազրկության դեմ պայքարի միջոց հանդիսանալ: Աշխատատեղերը զգալիորեն կավելանան ոչ միայն մայրաքաղաքում, այլև մարզերում: Ընդ որում, մեր կարծիքով, գրասենյակների աշխատակիցների համար մասնագիտական ցենզի և (կամ) աշխատանքային փորձի պահանջներ սահմանելն ավելորդ է, չի բխում այդ կառույցների ձևավորման տրամաբանությունից:

ПРАВОВЫЕ И ИНСТИТУЦИОНАЛЬНЫЕ ОСНОВЫ ЭФФЕКТИВНОГО АДМИНИСТРИРОВАНИЯ В КОНТЕКСТЕ ЭЛЕКТРОННОГО УПРАВЛЕНИЯ

Беспрецедентный прогресс информационно-коммуникационных технологий и их повседневное использование неизбежно привели к их проникновению во все сферы социального управления.

В связи с требованиями эры современных технологий, одновременно с обновлением государственной политики, государства стараются повысить эффективность государственного управления и местного самоуправления, а также сделать отношения граждан-административный орган максимально доступными и доверительными. В подобных условиях во всем мире отмечается тенденция перехода к инновационной электронной системе управления. Республика Армения не является исключением в контексте вышеуказанного процесса развития.

Переход к электронной системе управления отнюдь не должен быть самоцелью. Построение эффективной системы электронного управления неотъемлемо связано с коэффициентом эффективности администрирования органов государственной власти. Именно поэтому в рамках данной работы акцентированы будут вопросы недостатков, пробелов и проблем администрирования, производимого в рамках системы электронного управления, с одновременной попыткой предложить эффективные варианты их разрешения. С этой целью осью данной статьи стало исследование принципа «Одного окна», как одного из наиболее известных в мире сервис-ориентированных управленческих схем и средства повышения эффективности администрирования в системе электронного управления.

Данный принцип является одной из основных составляющих системы электронного управления, а также основой для реализации электронного администрирования. В целом, цели электронного управления и принципа «Одного окна» идентичны – обеспечить эффективное, скорое, малозатратное, доступное администрирование и свести коррупционные риски до минимума. Совмещение вышеупомянутых факторов крайне актуально, но вся проблема в том, что это совмещение является не столь простой задачей.

LEGAL AND INSTITUTIONAL BASES FOR EFFECTIVE ADMINISTRATION IN THE CONTEXT OF E-GOVERNANCE

The unprecedented progress of ICTs and their everyday use inevitably led to their penetration into all the spheres of social governance.

Trying to cope with the requirements of the era of technologies, countries are working to increase the effectiveness of public administration and local governance and to make citizen-administrative body relations as accessible and trusted as possible. In such circumstances, a tendency of switching to a new system of electronic governance is noticed all over the world.

The implementation of an innovative system of governance must never be an end in itself. Building an effective system of E-Governance is associated with the coefficient of efficiency of the public power bodies administration. Hence, the following work highlights the problems and gaps, existing in the administration, carried out in the scopes of contemporary system of electronic governance, while trying to offer effective solutions. This is the reason why the research of the "Single Window" principle was chosen the axis of this work, as one of the most service-oriented governance mechanisms and a tool of enhancing the effectiveness of e-administration.

The mentioned principle is one of the corner stones of the electronic governance system, as well as a basis for the implementation of e-administration. In fact, the goals of E-Governance and "Single Window" principle are generally identical, i.e. to provide effective, timely, inexpensive and accessible administration, as well as to reduce the corruption risks.

Combining of these two factors is vital, but the problem is that this combining is a mission hard to accomplish.

Բանալի բառեր՝ էլեկտրոնային կառավարում, էլեկտրոնային վարչարարություն, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն, էլեկտրոնային հասարակություն, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ, «Մեկ պատուհան», բազմագործառության կենտրոններ, քաղաքացիների սպասարկման գրասենյակներ:

Keywords: *e-governance, e-administration, e-document, e-society, ICTs, "Single window", multifunctional centers, citizen service centers.*

Ключевые слова: *электронное правительство, электронное администрирование, электронный документооборот, электронное общество, ИКТ, «Одно окно», многофункциональные центры, центры обслуживания населения.*